ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«24» 01 2023 թ.
№ 24/03/2-71

«ՋԻ ՋԻ կոնցեռն» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 01037495)
տնօրեն Գ. Ստեփանյանին
հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ավան 7 Փ.2 Նրբ./Շ/ 29/1
էլ. հասցե՝ gigiconcern@gmail.com
հեռ. 055 75 54 55

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՋԻ ՋԻ կոնցեռն» ՍՊԸ-ի միջև 12.08.2022թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-22-3/5-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՋԻ ՋԻ կոնցեռն» ՍՊԸ-ն 2022թ. 3-րդ եռամսյակի ընթացքում, պետք է մատակարարեր ընդհանուր 20 հատ Տեսապրոյեկտորներ (Տեսապրոյեկտոր): 21.12.2022թ. դրությամբ «ՋԻ ՋԻ կոնցեռն» ՍՊԸ-ն մատակարարել է 19 հատ Տեսապրոյեկտոր, սակայն ևս 1 հատ Տեսապրոյեկտոր «ՋԻ ՋԻ կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. հունվարի 24-ին, միակողմանի մասնակի, լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՋԻ ՋԻ կոնցեռն» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 15 545 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի ապահովման գումարը կազմում է 987 000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է 74 025 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Ընդ որում, Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները մինչև 02.02.2023թ. ներառյալ, Ձեր կողմից վճարվելու դեպքում՝ «ՋԻ ՋԻ կոնցեռն» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 02.02.2023թ. ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2072 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ